

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով դրամարկղային գործառնությունների իրականացման, ինչպես նաև կանխիկ դրամի պահպանման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, պետական և այլ հիմնարկների, դրանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա:

2. Սույն օրենքը չի տարածվում բանկերի և դրա առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող կազմակերպությունների վրա:

Հոդված 3. Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրությունը

Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրությունը ներառում է սույն օրենքը, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում կառավարության որոշումները:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հասկացությունները

Ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործված են հետևյալ իմաստներով՝
կանխիկ դրամ՝ Հայաստանի Հանրապետության արժույթը և արտարժույթը թղթադրամների և մետաղադրամների տեսքով.

դրամարկղային գործունեություն՝ կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպություն, ելքագրումը կազմակերպությունից, ինչպես նաև շարժը դրամարկղների և հաշվետու անձանց միջև.

դրամարկղ՝ կանխիկ դրամի ընդունման, պահպանման և բացթողման համար նախատեսված պահոց (պահեստարան).

գանձապահ՝ կազմակերպության աշխատակից, որն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից.

առնաշիվ տրված կանխիկ գումար՝ գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ կատարելու նպատակով կազմակերպության աշխատակիցներին կամ կառավարման մարմիններում ներգրավված անձանց տրված կանխիկ դրամ.

հաշվետու անձ՝ կազմակերպության աշխատակից կամ կառավարման մարմիններում ներգրավված անձ, որին գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ կատարելու նպատակով տրվել է կանխիկ գումար.

դրամարկղային գիրք՝ գրանցամատյան, որում գրանցվում է դրամարկղում կանխիկ դրամի մնացորդը ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ, ինչպես նաև կանխիկ դրամի մուտքը դրամարկղ և ելքը դրամարկղից:

ԳԼՈՒԽ II
ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐԸ

Հոդված 5. Դրամարկղային գործառնությունների իրականացումը

1. Դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի և (կամ) հաշվետու անձանց միջոցով:

2. Դրամարկղային գործառնությունների իրականացման, այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը սահմանում է կառավարությունը:

3. Երբ բանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը բանկային հաշվից հանելու հաջորդ օրը: Երբ դրամարկղից ելքագրված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության բանկային հաշիվներ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը դրամարկղից հանելու հաջորդ օրը:

Հոդված 6. Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները

1. Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում են հետևյալ սահմանափակումները՝
ա) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը՝

Սահմանափակման կիրառման ամսաթիվը (սկսած)	Սահմանափակման մեծությունը (հազար դրամ)
01.07.2003թ.	500
01.01.2004թ.	300
01.01.2005թ.	300

բ) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը`

Սահմանափակման կիրառման ամսաթիվը (սկսած)	Սահմանափակման մեծությունը (մլն դրամ)
01.07.2003թ.	5
01.01.2004թ.	3
01.01.2005թ.	3

2. Սույն հոդվածում նշված սահմանափակումների կիրառման իմաստով կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները, ներառյալ` կանխավճարները, առհաշիվ տրված կանխիկ դրամի հաշվին կատարվող վճարումները:

3. Սույն հոդվածում նշված սահմանափակումները չեն տարծվում աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների և այլ համանման վճարումների, գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումների, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների և կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց կատարվող` նրանց ձեռնարկատիրական գործունեության հետ կապ չունեցող վճարումների, գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գրված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումների, կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների, ծառայությունների և

աշխատանքների դիմաց վճարումների, ինչպես նաև կառավարության սահմանած դեպքերում անհետաձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում կատարվող վճարումների վրա:

Հոդված 7. Առհաշիվ տրված գումարների նկատմամբ սահմանափակումները

1. Միևնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել:

2. Կազմակերպությունների կողմից առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ կառավարությունը կարող է սահմանել հետևյալ ժամկետային սահմանափակումները`

ա) գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված գումարների` ըստ նպատակի ծախսման կամ կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձնելու առավելագույն ժամկետ.

բ) գործուղման նպատակով տրված կանխիկ դրամի` ըստ նպատակի չծախսված մասի կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձնելու առավելագույն ժամկետ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված` առհաշիվ տրված գումարների նկատմամբ սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երկուսը:

Հոդված 8. Պետական հիմնարկների դրամարկղային գործառնությունների նկատմամբ այլ սահմանափակումները

Եթե օրենքով կամ կառավարության որոշմամբ պետական հիմնարկների կանխիկ դրամով վճարումների և առհաշիվ տրված գումարների նկատմամբ սահմանված են այլ սահմանափակումներ, ապա սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված սահմանափակումների փոխարեն գործում են այդ սահմանափակումները:

ԳԼՈՒԽ III
ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

Յոդված 9. Կազմակերպության ղեկավարի պարտականությունները կանխիկ դրամի պահպանման գործում

Կազմակերպության դրամարկղում (դրամարկղներում) պահվող արեքների պահպանման, ինչպես նաև փոխադրման անվտանգության ապահովման պատասխանատվությունը կրում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, եթե կազմակերպության կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ այդ պատասխանատվությունը չի դրված այլ մարմնի վրա:

Յոդված 10. Գանձապահի պարտականությունները կանխիկ դրամի պահպանման գործում

1. Գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից:

2. Գանձապահին արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխանցել ուրիշ անձանց՝ առանց կազմակերպության ղեկավարի հրամանի (որոշման):

3. Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

ԳԼՈՒԽ IV

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 11. Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվությունը

Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջները խախտելու համար կազմակերպությունները պատասխանատվություն են կրում սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 12. Դրամարկղային գործառնությունների սահմանափակումները չպահպանելը

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Սույն հոդվածով նախատեսված տուգանքը ենթակա է վճարման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Յոդված 13. Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու, դրամարկղային գրքի վարման կանոնները խախտելը

Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Սույն հոդվածով նախատեսված տուգանքը ենթակա է վճարման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Յոդված 14. Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը

Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հարկային մարմինները: Սույն օրենքով սահմանված տուգանքները նշանակվում են հարկային մարմինների ղեկավարների որոշմամբ: Տուգանքի գումարը տասնօրյա ժամկետում չվճարելու դեպքում գումարները գանձվում են հարկային մարմինների հայցով՝ հօգուտ պետական բյուջեի:

ԳԼՈՒԽ V
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 15. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ռ.Քոչարյան

2003թ. հունվարի 28
Երևան
ՀՕ-501-Ն